ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 322- Ա 07 օգոստոսի 2020 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 17-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Էդուարդ Աղաջանյանի մոտ 2020 թվականի հուլիսի 8-ին ժամը 15:30-ին կայացած՝ «Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև դրանց պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակների մասին», խորհրդակցության Ն ԿԱ/139-2020 արձանագրության 3-րդ կետի հանձնարարականը որոշում եմ՝

1. Սևանա լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի չափաքանակների նկատմամբ հսկողություն իրականացնելու, ձկան պաշարների ելակետային տվյալները հստակեցնելու, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարողությունների զարգացման գործողությունների ճանապարհային քարտեզը մշակելու համար ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Գնել Սանոսյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ, աշխատանքային խմբի ղեկավար
Ռոբերտ Ղուկասյան	- Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական
Վարդան Մելիքյան	-Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
Արթուր Մկրտչյան	-Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ

Գուրգեն Աբրահամյան	- Հայաստանի Հանրապետության ոստիկանության ՀԱԱԳՎ ՀԿԱ վարչության արտաքին ծառայության կազմակերպման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
Ռոբերտ Գրիգորյան	-Հայաստանի Հանրապետության ՊԵԿ ՀՕՎՀ թիվ 13 (Գեղարքունիքի) բաժնի գլխավոր օպերլիազոր
Արմեն Արաբյան	-Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության կենդանական աշխարհի վերահսկողության բաժնի պետ
Արա Խլոյան	-«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Արայիկ Հունանյան	-«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և կադաստրի բաժնի պետ
Նորիկ Բաղալյան	-«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ձկնաբույծ-ձկնաբան

2. Աշխատանքային խմբին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը 20-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

07.08.2020

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Ք. Գավառ